

1. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն

2018 թվականին մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ծավալուն աշխատանքներ է կատարել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով: Մասնավորապես

- Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման համար 2018թ. ընթացքում ծախսվել է 123.710 հազար դրամ
- Մշակութային ծրագրերի գծով՝ 4.412,0 հազար դրամ
- Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային-փողային և լարային նվագարանների գծով՝ 59.035,9 հազար դրամ
- Կրթական ծրագրերի գծով 2018թ. ՀՀ պետական բյուջեից նախատեսվել էր 6.074.265.4 հազար դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է:

Ֆինանսական ծանր վիճակում գտնվող դպրոցներին վերաբաշխման արդյունքում հատկացվել են դրամական միջոցներ ֆինանսական տարին առանց պարտքերի դուրս գալու նպատակով: 2018 թվականի 2-րդ կիսամյակում մարզի մի քանի դպրոցներում իրականացվել են ընթացիկ և կապիտալ վերանորոգումներ՝ կապված «տաք սնունդ» ծրագրի ներդրման հետ:

Համաձայն ՀՀ կառավարության թվով 7 որոշումների ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին՝ պետական բյուջեի «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով, Կոտայքի մարզպետարանին հատկացվել է 213,345.0 հազար դրամ գումար մարզի մի շարք համայնքներում սուբվենցիոն ծրագրեր իրականացնելու նպատակով: 2018թ. համայնքների սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից հաստատվել է մարզի 10 համայնքի 19 ծրագիր, որից ընթացիկ տարում իրականացվել է 17-ը՝ ընդհանուր 420.1 մլն. դրամ արժեքով: Ընդ որում 262.8 մլն. դրամ ներդրվել է համայնքների բյուջեների և 157.3 մլն. դրամ՝ պետական բյուջեի միջոցներից: 2018թ. հաստատված ծրագրերից 2-ի շինարարական աշխատանքները կմեկնարկեն 2019 թվականին:

Ինչ վերաբերում է մարզի համայնքներին հատկացվելիք դոտացիաներին, ապա 2018թ. մարզի 42 համայնքներին բյուջեով նախատեսված գումարներն ամբողջությամբ հատկացվել են:

Տարվա ընթացքում պարբերաբար հավաքագրվել և ՀՀ ֆինանսների ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություններ են ներկայացվել մարզի համայնքների հողի հարկի ու գույքահարկի հաշվարկային տվյալները:

Յուրաքանչյուր ամիս ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացվել է մարզի համայնքների ծախսերի և եկամուտների, աշխատավարձերի պարտքերի վերաբերյալ, ինչպես նաև խոշոր ապառք ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ հաշվետվությունները:

2. Քաղաքաշինության վարչություն

2018 թվականին համայնքների ղեկավարների կողմից մարզպետարան է իրագեկվել 692 շինարարության թույլտվություններ:

Ոսումնասիրվել և համակարգվել է մարզում առաջնային լուծում պահանջող համայնքների խնդիրներին ուղղված թվով 16 ծրագրերի քաղաքաշինական փաստաթղթերի ձեռք բերման և կազմման գործընթացը, որոնցից 6 ծրագրերը գտնվում են ավարտման փուլում, իսկ մյուս 10 ծրագրերի գնումների գործընթացը կազմակերպելու նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերը սահմանված կարգով հանձնվել են ՀՏՁՀ-ին:

2018 թվականի հոկտեմբերի 25-ի N 321-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում հասարակական զուգարանների սանիտարական կանոնների և նորմերի պահանջների համապատասխանության ուսումնասիրության նպատակով մարզպետի կողմից ստեղծված աշխատանքային խմբի կազմով ուսումնասիրվել է 48 օբյեկտներ, որոնցից 32-ը ԱԳԼՃԿ-ներ են, իսկ 15-ը՝ հեղուկ վառելիքի կետեր: Հանձնաժողովի կողմից բոլոր 48 օբյեկտների համար կազմվել է թերությունների վերաբերյալ արձանագրություններ:

2018 թվականի ընթացքում քաղաքաշինության բնագավառում վարչական հսկողություն է իրականացվել թվով 18 համայնքներում՝ 3-ը քաղաքային, որի

ժամանակ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի հայտնաբերվել է թվով 31 ինքնակամ շինության շինարարական աշխատանքներ:

ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների վրա գույքագրված է 16 միավոր կիսակառույց, անավարտ շինարարական օբյեկտներ: ՀՀ վարչապետի 2018 թվականի հուլիսի 18-ի հանձնարարականի համաձայն համայնքների ղեկավարներին առաջարկվել է ձեռնարկել օրենքով սահմանված միջոցներ նշված կիսակառույց և անավարտ շինությունների հետագա կարգավիճակների հստակեցման վերաբերյալ:

Բնակարանային և ենթակառուցվածքների գործունեություն

2018 թվականին մարզի 10 համայնքների միջոցներով իրականացվել են 80 մլն. 641 հազար դրամի ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքներ:

19 համայնքների կողմից իրականացվել են 175 մլն.147 հազ.դրամի փողոցային լուսավորության աշխատանքներ:

3 համայնքների կողմից իրականացվել են 2 մլն.528 հազ.դրամի սելավատարների մաքրման աշխատանքներ:

Չարենցավան համայնքի կողմից իրականացվել են 15 մլն. 297 հազ. դրամի բազմաբնակարան շենքերի վերելակների և շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ:

Եղվարդ համայնքի կողմից իրականացվել են 28 մլն. 476 հազ. դրամի գազիֆիկացման աշխատանքներ:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվել են Կամարիս, Ձորաղբյուր և Գեղաշեն բնակավայրերի խմելու ջրի ջրագծերի և խմելու ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքներ` 38 մլն.19 հազ.դրամի չափով:

Տրանսպորտ և ճանապարհաշինություն

ՀՀ Կոտայքի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ամառային և ձմեռային ընթացիկ պահպանման նպատակով 2018 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 123.8 մլն դրամ: Հատկացված գումարի շրջանակներում հնարավոր է եղել Կոտայքի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացնել 117.2 կմ ամառային և 128.9 կմ ձմեռային ընթացիկ պահպանման աշխատանքներ:

Մարզում առաջնահերթ հիմնանորոգման կարիք ունեցող մարզային նշանակության ճանապարհներից են

- Արագյուղ – Թեղենիք – 4.5կմ
- Հ3–Հացավան – 1.5կմ
- Աբովյան – Բալահովիտ – 4.4կմ
- Հ28- Մեղրաձոր – 4.4կմ
- Հրազդան–Ջրառատ–4.2 կմ.

ինչպես նաև հանրապետական նշանակության ճանապարհներ

- Հ1, Ջրաբեր – Հրազդան հանրապետական ճանապարհի 2.0 կմ հատվածը (Հրազդանի երիտասարդական թաղամաս տանող)
- Նոր Գեղի–Արզական–Հրազդան ավտոճանապարհի 1.5 կմ հատվածը (Հրազդանի լիճը շրջանցող):

3.Տեղական ինքնակառավարման և գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչություն

2018 թվականին կազմակերպվել և անցկացվել է Հացավան, Գետամեջ համայնքների ղեկավարների, Նոր Արտամետ, Քասախ համայնքների ավագանիների, ինչպես նաև Հրազդան, Արզնի, Գեղաշեն, Մրգաշեն և Սուլակ համայնքների ղեկավարների արտահերթ ընտրություններ:

2018 թվականի դեկտեմբերի 9-ին կազմակերպվել և անցկացվել է ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ:

2018 թվականին հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն մարզի 14 համայնքների ղեկավարների և ավագանիների 2015-2018թթ. գործունեության նկատմամբ իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի համապատասխան հանձնարարականների համաձայն, աշխատանքային ծրագրից դուրս՝ արտահերթ

իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել նաև Նոր Արտամետ, Հրազդան, Հացավան և Բալահովիտ համայնքներում:

2018թ ընթացքում մարզպետարանի այլ ստորաբաժանումների հետ համատեղ կատարվել է ավագանիների և համայնքների ղեկավարների որոշումների իրավական հսկողություն, որոնց արդյունքներով ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ 238 գրություններ է ներկայացվել համայնքների ղեկավարներին:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է զենքի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության 98 դեպք, նախորդ տարվա 89-ի դիմաց:

2018 թվականի ընթացքում արձանագրվել է բացահայտման տոկոսում հաշվվող հանցագործության 1962 դեպք (2017թ.-ին՝ 1566). նախորդ տարվա համեմատությամբ աճել է 396 դեպքով, կամ 25.3 %-ով:

Մարզի վարչական տարածքում ճանապարհատրանսպորտային պատահարների քանակը 2018 թվականի ընթացքում 386 է, (2017թ.-ին՝ 309). աճել է 77-ով, գոհվել է 39 մարդ. (2017թ.-ին՝ 31 մարդ). աճել է 8-ով, վիրավորվել է 551 քաղաքացի, (2017թ.-ին 464 քաղաքացի). աճել է 87-ով:

4. Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն

Մարզում գործում են մարզպետարանի ենթակայության 90 հանրակրթական ուսումնական հաստատություններ. 59-ը՝ միջնակարգ, 30-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /օժանդակ/, ԿԳ նախարարության ենթակայության 12 հանրակրթական ուսումնական հաստատություններ:

2018-2019 ուսումնական տարում մարզի ուսումնական հաստատություններում սովորում են 37.165 աշակերտներ, իսկ առաջին դասարան են հաճախում 3769 աշակերտներ:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններից հիմնանորոգված են 38-ը՝ 27-ը մասնակի, իսկ մնացած 26-ը վերանորոգման կարիք ունեն:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում լոկալ ջեռուցմամբ ապահովված են 90 դպրոցներից 74-ը, իսկ 16-ը ջեռուցվում են էլեկտրական ջեռուցիչներով և վառարաններով:

Մարզում գործում են 54 նախադպրոցական հաստատություններ, որոնցից 26-ը հիմնովին վերանորոգված են:

«Հայաստանի գյուղական համայնքներում նախադպրոցական խնդրի լուծման նորարարական ձև» ծրագրի շրջանակներում «Մոբայլ մանկապարտեզ»-ներով նախադպրոցական կրթություն է իրականացվում Ջրաբերի և Նուռնուսի համայնքներում:

2018-2019 ուսումնական տարում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրով մարզի 37 դպրոցներում վերանորոգվել և կահավորվել են ճաշարաններ և արդեն 83 դպրոցների շուրջ 14.000 տարրական դասարանների աշակերտներն ապահովվել են ամենօրյա տաք սննդով:

Չարենցավանի N6 հիմնական և Քաղսիի միջնակարգ դպրոցների խոհանոցներն ամբողջությամբ նոր գույքով կահավորվել են ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրով:

2018 թվականին տեղի է ունեցել 16 տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթ և բոլորը համալրվել են, ինչպես նաև աշխատանքի են նշանակվել 93 ուսուցիչներ:

Մշակույթ

2018թ-ի ընթացքում մշակութային միջոցառումների մարզային ծրագրի համաձայն կազմակերպվել և իրականացվել են ՀՀ պետական ու ազգային տոներին և հիշատակի օրերին, ինչպես նաև ժողովրդական ավանդույթների և ծեսերի պահպանմանը, ժամանակակից արվեստի տարբեր ճյուղերի զարգացմանը նվիրված զանազան միջոցառումներ՝ ասմունքի, էպոսասացության, երգի ու պարի մրցույթ-փառատոններ, ցուցահանդեսներ, համերգներ:

2018 թվականին վերանորոգվել են Բյուրեղավանի արվեստի և Զովունիի երաժշտական դպրոցների շենքերը, մասնակիորեն՝ Աբովյանի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոցը:

Պետական և համայնքային միջոցների, ինչպես նաև նվիրատվությունների հաշվին մարզային գրադարանը համալրվել է 1177 գրքով, որից 1135-ը ձեռք է բերվել պետական միջոցներով, իսկ 42-ը՝ նվիրատվությունների հաշվին: Համայնքային գրադարանները համալրվել են 3480 գրքով, որից պետական միջոցների հաշվին՝ 1350 գիրք:

Սպորտ

Կազմակերպվել են բազմաթիվ մրցաշարեր՝ ՀՀ դպրոցականների 27-րդ մարզական խաղեր /վեց մարզաձևերից/, ՀՀ «Ազգային ժողովի գավաթի խաղարկության» մրցումներ, ՀՀ դպրոցականների շախմատի օլիմպիադայի տարածաշրջանային և մարզային մրցումներ, շախմատի պատանեկան և տղամարդկանց մարզային առաջնություններ, 8-12 դասարաններում սովորողների հանրապետական սպարտակիադա, նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղեր:

Մարզի ութ համայնքներում մարզպետարանի համակարգմամբ անցկացվել են մարզական փառատոներ, «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի համայնքային ու մարզային փուլերը: «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի եզրափակիչ փուլին մասնակցել են հաշմանդամություն ունեցող 3 մարզական ընտանիքներ, Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի հանրապետական փուլին մասնակցել են 8 մարզիկներ:

Հաշվետու տարում շահագործման հանձնվեց Հրազդան քաղաքի լողավազանը, ավարտվեց Զարենցավանի համայնքային ենթակայության մանկապատանեկան մարզադպրոցի նոր շենքի կառուցումը /կահավորման աշխատանքները կիրականացվեն 2019 թվականին/:

Կազմավորվել է մարզպետին կից երիտասարդական խորհրդի նոր կազմը:

5. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

2018թ.-ի 2-րդ կիսամյակում տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինն իր հիմնական խնդիրներին և նպատակներին համապատասխան՝ կատարել է մարզպետարանի կողմից իրականացվող նախաձեռնությունների, աշխատանքային խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների, Կոտայքի մարզպետի, փոխմարզպետերի, մարզպետարանի պաշտոնատար անձանց այցելությունների, մարզի համայնքներում տեղի ունեցող իրադարձությունների լուսաբանման աշխատանքներ (ընդհանուր թվով՝ 245 թողարկում):

2018 թվականի սեպտեմբերի 10-ին կազմակերպել և իրականացրել է Կոտայքի մարզպետի պաշտոնավարման 100 օրվա ամփոփմանը նվիրված մամուլի ասուլիս:

Ապահովել է մարզպետարանի և լրատվամիջոցների միջև կապն ու ակտիվ համագործակցությունը: Ըստ անհրաժեշտության՝ պատրաստել և տարածել է հայտարարություններ, մամուլի հաղորդագրություններ և իր իրավասությունների շրջանակներում հանդես է եկել պարզաբանումներով ու հայտարարություններով:

Պարբերաբար իրականացրել է մամուլի հետազոտություն և հրապարակումների վերլուծություններ, ներկայացրել է առաջարկներ մամուլում մարզպետարանի պաշտոնյաների ներկայացվածության վերաբերյալ:

Պատշաճ կերպով համագործակցել է այլ գերատեսչությունների և մարզպետարանի ստորաբաժանումների հետ, ստացել և հրապարակել է պոտենցիալ լսարանին հետաքրքրող տեղեկատվություն:

Ապահովել է օրենսդրությամբ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը տարին առնվազն մեկ անգամ: Մասնակցել է մարզպետարանում անցկացվող նիստերին, խորհրդակցություններին, քննարկումներին, բանակցություններին, պաշտոնական և աշխատանքային այլ միջոցառումներին և ապահովել է դրանց հրապարակայնությունը:

Իրականացրել է մարզպետարանի պաշտոնական կայքէջի անխափան աշխատանքը: Մարզպետարանի պաշտոնական կայքէջով իրականացրել է օրենսդրությամբ նախատեսված տեղեկատվության պատշաճ հրապարակում համապատասխան բաժիններում և ենթաբաժիններում:

Շարունակական աշխատանքներ է տարել մարզպետարանի պաշտոնական կայքի տարբեր ենթաբաժիններում առկա տեղեկատվության խմբագրման, ինչպես նաև որոշակի կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու ուղղությամբ, պարբերաբար տեղադրել է մարզպետի որոշումներն ու կարգադրությունները, համայնքների ղեկավարների և ավագանու որոշումները:

Օրենքով սահմանված կարգով հանրությանը տեղեկացրել է քաղաքացիների դիմումների, բողոքների, առաջարկությունների վերաբերյալ մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից մշակված արդյունքների մասին:

Մշակել է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:

Ըստ այդմ, 2018 թվականին Կոտայքի մարզպետարան տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել են 122 հոգի, որոնցից 85-ը տարբեր գերատեսչություններից, 17-ը՝ հասարակական կազմակերպություններից, 1-ը՝ լրագրող, 19-ը՝ քաղաքացիներ:

6. Զարգացման ծրագրերի, գրոսաշրջության և վերլուծության

բաժին

Արդյունաբերություն

2018թ. ընթացքում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 193.9 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 159.6 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալներն ավելացել են 21.5%-ով: Արդյունաբերական արտադրանքի ծավալների ավելացումը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ էլեկտրաէներգիայի արտադրության, մշակող արդյունաբերության և հանքագործական արդյունաբերության ցուցանիշների ավելացմամբ:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալները հաշվետու ժամանակահատվածում ավելացել են 20.7%-ով կամ իրացվել է 192.5 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 159.5 մլրդ. դրամի դիմաց:

2018թ. արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 124.2 մլրդ. դրամ, իսկ արտաքին շուկայում՝ 68.3 մլրդ. դրամ, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ արտահանվել է 26.1 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 42.2 մլրդ. դրամի արտադրանք: Հաշվետու ժամանակահատվածում արտադրանքի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 55.9%-ով:

Առևտուր և սպասարկում

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 62.8 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 773.2մլն. դրամով կամ 4.7%-ով:

Բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կազմել է 119.4 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 14.2 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 13.5%:

Մասնավոր ներդրումներ

2018 թվականին մարզում մասնավոր ներդրողների կողմից կատարվել են 29.9 մլրդ. դրամի ներդրումներ, ընդ որում՝ 16.3 մլրդ. դրամ ներդրվել է արդյունաբերության, 2.2 մլրդ. դրամ՝ գյուղատնտեսության, 1.2 մլրդ. դրամ՝ զբոսաշրջության, 10.2 մլրդ. դրամ՝ առևտրի և սպասարկման ոլորտներում: Ներդրումների արդյունքում ստեղծվել է ավելի քան 1535 աշխատատեղ, որից՝ 768-ը՝ արդյունաբերության, 332-ը՝ գյուղատնտեսության, 227-ը՝ զբոսաշրջության, 208-ը՝ առևտրի և սպասարկման ոլորտներում:

7. Գյուղատնտեսության և բնասպահականության վարչություն

Մարզում գործում են 31 679 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Մարզի հողային հաշվեկշիռը հետևյալն է՝ գյուղ. նշանակության

հողեր՝ 154622.1 հեկտար, այդ թվում՝ վարելահողեր՝ 37708.4 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 2779.6 հեկտար, խոտհարք՝ 11257.0 հեկտար, արոտներ՝ 78922.0 հեկտար, այլ հողատեսքեր՝ 23843.1 հեկտար:

2018թ. բերքի տակ կատարվել է 16702 հեկտար գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք: 2018թ.-ի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնզանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում համայնքների 283 շահառուների կողմից վճարվել և ձեռք է բերվել պահանջարկի չափով: Պետական աջակցության ծրագրերով 2018թ.-ին մարզին հատկացվել և ներկրվել է նաև պարարտանյութերի համապատասխան չափաբաժինները:

Գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված վճարունակ պահանջարկն ամբողջությամբ բավարարվել է, ծրագրից օգտվել են մարզի 25 համայնքների շուրջ 775 շահառուներ:

Մարզում առկա է 3149 հա պտղատու այգի. 627 հեկտարը ինտենսիվ այգիներ են, որոնցից 308 հեկտարը հիմնվել է վերջին նորագույն տեխնոլոգիաներով /հակակարկտային ցանց, կաթիլային ոռոգում և այլն/:

Ինտենսիվ այգիներից հակակարկտային ցանցով ապահովված է 40 հա, միաժամանակ ընթացքի մեջ են հին, ոչ լիարժեք այգիների քանդման և նոր ինտենսիվ տեխնոլոգիաներով պտղատու այգիների հիմնման աշխատանքները:

Մարզում լուրջ առաջընթաց կա գործող անասնապահական մթերքների արտադրության վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների գործունեության բնագավառում, որոնց տեխնիկական հագեցվածությունը տարեցտարի ավելանում և համապատասխանեցվում է միջազգային ստանդարտներին: Արտադրանքի աճի հետ մեկտեղ զգալի աշխատանքներ են տարվել որակյալ և մրցունակ ապրանքների արտադրության ուղղությամբ՝ մարզի մի շարք ընկերությունների որոշ ապրանքատեսակներ արտահանում և հաջողությամբ իրացնում են արտերկրում:

Առկա է և գործում է 6 սառնարանային տնտեսություն 11000 տոննա տարողությամբ: Հաջորդ տարի շահագործման կհանձնվի ևս երկու սառնարան 2000 տոննա տարողությամբ: Մարզում առկա է 5 սպանդանոց, որից գործում է 4-ը, լուրջ աշխատանք է տարվում տոհմային գործի բարելավման և տոհմային տնտեսությունների ձևավորման ուղղությամբ:

Բնապահպանության բաժին

Առավել կարևորվում է թափոնների կառավարման ոլորտը, քանի որ ամեն ինչից անկախ մարզը զբոսաշրջության և հանգստի գոտիների կազմակերպման մեծ ներուժ ունի: Խնդիրը հատկապես կարևորվել է վերջին 2 տարիներին՝ «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում:

Համայնքներում աղբահեռացման և սանիտարական մաքրման աշխատանքները մշտապես գտնվել են ուշադրության կենտրոնում, շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ տարվող աշխատանքները բավականին ակտիվացել են, սակայն դրանք բավարար համարել չի կարելի՝ հաշվի առնելով ընդհանուր իրավիճակը և որոշ համայնքների ղեկավարների կողմից դեռևս ոչ պատշաճ ձևով մոտեցումը թիվ մեկ խնդրի լուծման գործում: Համայնքներում պատշաճ աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի դրա համար բյուջեում նախատեսվեն իրատեսական միջոցներ, ապահովվի ֆիզիկական և իրավաբանական անձանցից աղբահանության դիմաց հավաքագրումները:

Ընթացիկ տարում 2 անգամ Մարզի Խորհրդում քնարկվել է «Մարզի համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման մասին» հարցը: Ամենօրյա ուշադրության կենտրոնում են եղել նաև միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ ճանապարհամերձ տարածքների մաքրության հարցերը:

Կատարված աշխատանքների վերաբերյալ յուրաքանչյուր ամսվա սկզբին տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

8. Հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային

հողային պետական տեսչություն

2018թ. հողային հաշվեկշռի համաձայն մարզի ընդհանուր տարածքը կազմում է 209 223.2 հա, որից 155 0235.8 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր են: Մարզի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով իրավական և մասնագիտական վերահսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմում մեր կողմից ընթացիկ ստուգումներ են իրականացվել մարզի 18 համայնքներում:

ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն համայնքների ղեկավարների մասնակցությամբ մարզային հանձնաժողովում քննարկվել և ՀՀ վարչապետի 13.05.2001թ. թիվ 599 որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել մարզի 11 համայնքների վարչական տարածքներում գտնվող թվով 18 միավոր հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործեր, որոնցից 8 միավորի վերաբերյալ ստացվել են դրական եզրակացություններ, 8 միավորների հողաշինարարական գործերը վերադարձվել են լրամշակման, իսկ 2-ը ընթացքի մեջ են:

ՀՀ կառավարության 23.07.2015թ. թիվ 828-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չունեցող համայնքներից ստացվել են թվով 9 միավոր հողամասերի գործառնական նշանակության փոփոխության առաջարկություններ, որոնցից 9-ը ստացել են մարզպետի համաձայնությունը և դրանց սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք:

2018թ. ընթացքում ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն մարզային համապատասխան հանձնաժողովում քննարկվել են մարզի Եղվարդ համայնքում գտնվող 3 միավոր գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերը ավելի ցածր արժեքի փոխանցելու վերաբերյալ առաջարկությունը: Դրանցից 2-ի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն, իսկ մեկը հանձնաժողովի կողմից մերժվել է:

9. Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն

ՀՀ Կոտայքի մարզում գործում են 40 բուժհաստատություններ՝ որոնցից 35 մարզպետարանի ենթակայության են, իսկ 5-ը՝ համայնքային ենթակայության:

Մարզի մահճակալային ֆոնդը 253 է, մահճակալային տարեկան զբաղվածությունը՝ մոտ 79%:

2018թ. գլոբալ բյուջեն կազմում է մոտ 2 մլրդ 915 մլն դրամ, որից՝ ամբուլատոր ծառայության գծով 1 մլրդ 971 մլն դրամ, հիվանդանոցային ծառայության գծով՝ 944.5 մլն դրամ: 2018 թվականի ընթացքում ընկերություններում այլ եկամուտները (վճարովի բժշկական ծառայություններ, տարածքների վարձակալում և այլ) կազմել են մոտ 485 մլն (2017թ.-352 մլն.) դրամ:

2018թ. ընթացքում Կոտայքի մարզի մի շարք համայնքների կողմից բժշկական հաստատություններին աջակցություն է ցուցաբերվել շուրջ 11 մլն դրամի չափով՝ բժշկական սարքավորումների ձեռք բերման, բժշկական օգնության և սպասարկման բարելավման, ջեռուցման ապահովման և այլ նպատակներով:

Մարզի բժշկական կազմակերպություններում աշխատում են շուրջ 1656 անձ:

ՀՀ ԱՆ կողմից կենտրոնացված գնումներով մարզի համապատասխան հիվանդանոցներին տրամադրվել է 107.5 մլն. դրամ (2017թ.- 92 մլն. դրամ) և հումանիտար օգնության ճանապարհով՝ 116 մլն դրամ (2017թ.- 56.5 մլն. դրամ) արժողությամբ դեղամիջոցներ: Ըստ անհրաժեշտության կատարվել են ներմարզային վերաբաշխումներ:

2018 թվականին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը անհատույց տրամադվել և ՀՀ Կոտայքի մարզին է նվիրաբերվել 453 987.9 դրամ արժողությամբ շտապ օգնության ռեանիմոբիլներ (4), շտապ օգնության գծային մեքենաներ (11):

Քաղաքացիների բժշկական օգնությունն ու սպասարկումը պատշաճ մակարդակով իրականացնելու նպատակով միջոցներ են ձեռնարկվել «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական հիվանդանոցային մասնաշենք տեղափոխելու ուղղությամբ, որի նպատակով 2018թ «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման համար տարվա ընթացքում հատկացվել է 18 մլն դրամ՝ սեփական խնայողության միջոցներից (առ 11.03.2019թ. 26 մլն դրամ):

Ինտեգրված սոցիալական ծառայություններ

Չարենցավան, Եղվարդ և Հրազդան քաղաքներում գործում են ինտեգրված սոցիալական ծառայությունները, որոնք ամբողջությամբ վերանորոգված են և ապահովված աշխատանքային ու կոմունալ բոլոր հարմարություններով: Արբվյան քաղաքում ինտեգրված սոցիալական ծառայությունների տեղակայումը գտնվում է նախապատրաստական փուլում:

Մեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագրին մասնակցել են մարզի 17 համայնքների 543 շահառուներ: 2018թ. ծրագրի իրականացման համար նախատեսված էր շուրջ 85 մլն. դրամ:

2003-2018թ. բնակարանային ապահովման նպատակով աջակցություն են ստացել մարզի զոհված և հաշմանդամ դարձած 234 անապահով զինծառայողների ընտանիքներ: Դեռևս բնակարանի բարելավման կարիք ունեն 217 զոհված /78/ ու վիրավոր /139/ ազատամարտիկների ընտանիքներ:

Տարվա ընթացքում 2-րդ խմբի զին. հաշմանդամ 6 անօթևան ընտանիքի բնակարանային գործեր ուղարկվել է ՀՀ ՊՆ բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողով, դեռևս քննարկման փուլում են:

Մարզում գործում է «Առաքելություն Հայաստան» և «Դիակոնիա» բարեգործական հասարակական կազմակերպությունները, որոնք միայնակ տարեցների և ծայրահեղ աղքատ ընտանիքների համար տրամադրում են անվճար սնունդ, կենցաղային տեխնիկա և իրականացնում են սոցիալական սպասարկում:

Արբվյան քաղաքում գործում է «Սաթենիկ» բարեգործական հասարակական կազմակերպություն տուն-ինտերնատը, որի խնամքի տակ են 36 միայնակ տարեցներ:

«Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում» ծրագրով մարզում գործում են 5 մանկապատանեկան ճամբարներ, որտեղ իրենց ամառային հանգիստն են անցկացնելու զոհված ու վիրավոր ազատամարտիկների, աշխահագորայինների և կարիքավոր ընտանիքների 4500 երեխաներ՝ երեք հերթափոխով: Մարզին

հատկացված է 240 տեղ, 1-ին հերթափոխի 90 տեղ, 2-րդ հերթափոխի 75 տեղ, 3-րդ հերթափոխի 75 տեղ:

Մարզպետարանի մշտական ուշադրության կենտրոնում են ապրիլյան պատերազմի ընթացքում զոհված և վիրավորված մարզի ազատամարտիկների ընտանիքները, ծանր հիվանդությամբ տառապող մանկահասակ երեխանների, 5 և ավել երեխաներ ունեցող և ծայրահեղ ծանր սոցիալական վիճակում գտնվող ընտանիքները:

Մարզպետի մոտ 11 անգամ կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն:

«Այլ նպաստներ պետ.բյուջեից» /մարզպետի կողմից քաղաքացիներին տրամադրվող ֆին.օգնություն / 30մլն.դրամ, 1-ին եռամսյակ 6 մլն, 2-րդ - 7.5մլն, 3-րդ - 7.5մլն, 4-րդ - 9մլն դրամ:

10. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության /ԸԿԵԻՊ/ բաժնի կողմից առանց ծնողական խնամքի մնացած /ԱԾԽՄ/ և ԱԾԽՄ թվին պատկանող անձանց մարզային շտեմարաններով հաշվառված են 110 ԱԾԽՄ և ԱԾԽՄ թվին պատկանող անձինք. ԱԾԽՄ երեխաներ են 76-ը (նրանցից 10-ը հաշվառվել են 2018թ. ընթացքում), իսկ ԱԾԽՄ թվին պատկանող՝ 34 անձ:

Առանց ծնողական խնամքի մնացած 5 երեխաներ խնամվում են 3 խնամատար ընտանիքներում, նրանցից 3 երեխա՝ Առինջ համայնքում, 1 երեխա՝ Ջրվեժ և 1 երեխա՝ Արգել համայնքներում:

Մարզի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների շտեմարանում ոստիկանության անչափահասների գործերով բաժանմունքներից ստացված տվյալների հիման վրա 2018թ. ընթացքում հաշվառվել են 37 իրավախախտ անչափահասներ, հաշվառումից հանվել՝ 29-ը, այժմ հաշվառման մեջ են գտնվում 32 իրավախախտ անչափահասներ:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանի աշխատակազմի կողմից տրված եզրակացությունների հիման վրա բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններ են տեղավորվել 8 երեխաներ, նույն հաստատություններից կենսաբանական ընտանիք է վերադարձվել 2 երեխա:

Արդյունավետ աշխատանք է տարվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հայտնաբերման, կրթության իրավունքի վերականգնման, ներառական կրթության համակարգ ընդգրկելու և նրանց կարիքի գնահատման առումով: Արդյունքում այս տարվա ընթացքում համապատասխան եզրակացությունների հիման վրա վկայագրեր են տրվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 78 երեխաների:

2018թ. «Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ է տեղավորվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալապես անապահով ընտանիքի 1 երեխա, իսկ 13 երեխաներ համապատասխան եզրակացությունների հիման վրա դուրս են գրվել խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունից:

Կոտայքի մարզում բնակվող 10 դիմումատու քաղաքացիներ 2018թ.-ին հաշվառվել են որպես որդեգրել ցանկացող անձինք: Կատարվել են տունայցեր՝ կենսապայմանների ուսումնասիրման նպատակով, կազմվել համապատասխան ակտեր, որոնց հիման վրա բաժնի կողմից տրվել են դրական եզրակացություններ: Հաշվառվել են նաև որդեգրման ենթակա 5 երեխաներ:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված /ԿԴԻՀ/ երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգ 2018թ. ընթացքում մուտքագրվել է 66 երեխաների և երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիների տվյալներ՝ այդ թվում 56 ԿԴԻՀ երեխաներ և երեխա որդեգրել ցանկացող 10 քաղաքացիներ:

11. Իրավաբանական բաժին

1. 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի կողմից ստուգանշվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 401 որոշումներ, 218 կարգադրություններ, գլխավոր քարտուղարի 371 հրամաններ: Մարզպետի իրավական ակտերը

սահմանված կարգով /ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 6-ի N1167-Ն հրաման/ առաքվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ իրավաչափության ուսումնասիրման համար, որոնց վերաբերյալ որևէ դիտողություն չի արձանագրվել:

2. Ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 42 համայնքների ավագանիների թվով 2739 որոշումներ, համայնքներիի ղեկավարների՝ 11792 որոշումներ, արձանագրված թերությունների վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկություններ՝ գործող օրենսդրությանը համապատասխանեցնլու վերաբերյալ:

3. Ուսումնասիրվել և համապատասխան ընթացք է տրվել բաժին մակագրված գրություններին և դիմումներին, այդ թվում ՀՀ տարբեր ատյանի դատարաններում բաժինը հանդես է եկել որպես ՀՀ Կոտայքի մարզպետարանի ներկայացուցիչ:

4. Բաժինը 18 համայնքներում մասնակցել է վարչական հսկողության աշխատանքներին և արձանագրված թերությունների վերաբերյալ ներկայացվել են համապատասխան տեղեկանքներ:

5. Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության վերաբերյալ մարզպետարանի ստորաբաժանումներին, տեղական իքնակառավարման մարմիններին և մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային և առևտրային կազմակերպությունների աշխատողներին պարբերաբար տրվել են համապատասխան պարզաբանումներ:

12. Ներքին աուղիտի բաժին

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2018թ. տարեկան ծրագիրը պլանավորվել է ռիսկերի գնահատման հիման վրա և հանդիսանում է ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2018-2020թթ. ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասը: 2018թ. ներքին աուղիտի

տարեկան ծրագիրը հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզպետի 29.12.2017թ. N 323-Ա որոշմամբ, որով 2018թ. իրականացվել է թվով 36 աուդիտ, որից 2-ը՝ մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներում, 4-ը՝ 100% պետական բաժնեմաս ունեցող ընկերություններում, 30-ը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններում:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից 2018թ-ին նախատեսված աշխատանքները իրականացվել են ամբողջ ծավալով և դրանց արդյունքները ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Աուդիտի արդյունքներով արձանագրված թերությունները, բացթողումները և անհամապատասխանության դեպքերը քննարկվել են ՀՀ Կոտայքի մարզպետարանում, որի հիման վրա տրվել են համապատասխան հանձնարարականներ (գործողությունների ծրագիր)՝ դրանց վերացման և հետագա գործունեությունը բարելավվելու ուղղությամբ, ինչպես նաև աուդիտի արդյունքներով 2 մլն. 522 հազար դրամ նվազեցվել է ՊՈԱԿ-ների 2018 թվականի ֆինանսավորման ծավալներից, իսկ 2 մլն. 876.0 հազ. դրամը վերականգնվել է կազմակերպությունների հաշվարկային հաշիվներին:

13. Անձնակազմի կառավարման բաժին

Մարզպետարան

ՀՀ Կոտայքի մարզպետի կողմից ընդունվել են **403** որոշումներ, **218** կարգադրություններ, իսկ գլխավոր քարտուղարի կողմից՝ **371** հրամաններ:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2018 թվականի հաստիքացուցակում առկա են 137 հաստիքներ, որից 4-ը՝ վարչական պաշտոններ են, 7-ը՝ հայեցողական պաշտոններ, 120-ը քաղաքացիական ծառայության պաշտոններ և 6-ը տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններ: Պաշտոնի են նշանակվել 22 անձ, որից 4-ը՝ վարչական, 8-ը՝ հայեցողական և 10-ը՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններում: Պաշտոնից ազատվել են՝ 26 անձ, որից որից 4-ը՝

վարչական, 7-ը՝ հայեցողական և 15-ը՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններից:

Քաղաքացիական ծառայություն

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առկա են քաղաքացիական ծառայության 120 պաշտոններ, որից 20-ը թափուր են: Կայացել են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 4 մրցույթներ, որից 1-ը ՀՀ ՔՕԽ-ում: Պաշտոնի են նշանակվել 3 քաղաքացիական ծառայողներ՝ մրցութային կարգով: Պաշտոններից ազատվել է 17 քաղաքացիական ծառայողներ՝ 13-ը անձնական դիմումի համաձայն, 4-ը՝ պաշտոնավարման առավելագույն տարիքը լրանալու հիմքով (65 կամ 66 տարեկան): Վերապատրաստվել են 44 քաղաքացիական ծառայողներ: Քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ են շնորհվել 2, առավելագույն դասային աստիճան՝ 3 քաղաքացիական ծառայողների: Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կնքվել են 10 ժամկետային աշխատանքային պայմանագիր, լուծվել են՝ 4-ը:

Առողջապահական բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ գործում են 8 առողջապահական բաժնետիրական ընկերություններ և 27 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպություններ: Թափուր են 1 առողջապահական բաժնետիրական ընկերության և 17 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների պաշտոններ: Կայացել են 2 առողջապահական բաժնետիրական ընկերության տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ: Պաշտոնի են նշանակվել 2 առողջապահական բաժնետիրական ընկերության տնօրեններ: Պաշտոնից ազատվել են 4 առողջապահական պետական ոչ

առևտրային կազմակերպության տնօրեններ: 2 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենների աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է 3 և 2 տարի ժամկետներով: 4 առողջապահական բաժնետիրական ընկերությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ 2-ը «Նկատողություն» և 2-ը «Խիստ նկատողություն» կարգապահական տույժի:

Կրթական, մշակութային և մարզական պետական ոչ առևտրային կազմակերպություններ

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ գործում են 93 պետական ոչ առևտրային կազմակերպություններ, որից՝ 1 մշակույթի կենտրոն, 2 մարզադպրոցներ, 59 միջնակարգ դպրոցներ, 30 հիմնական դպրոցներ և 1 հատուկ (օժանդակ) դպրոց: Թափուր է 2 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոն: Նշանակվել են 15 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ: Ազատվել են 15 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններ, որից 1-ը անձնական դիմումի համաձայն, 12-ը՝ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով և 2-ը՝ պաշտոնավարման առավելագույն տարիքը լրանալու հիմքով (65 տարեկան): 13 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ 5-ը «Նկատողություն» և 8-ը «Խիստ նկատողություն» կարգապահական տույժի:

14 Քարտուղարություն

Ընդհանուր բաժին

Տարվա փաստաթղթաշրջանառությունը կազմել է 35290 փաստաթուղթ, որից՝ 2670 դիմումներ քաղաքացիներից:

Դիմումները խմբավորվում են ըստ հարցի բնույթի՝

1. Ֆինանսական – 1215
2. բնակարանային – 190
3. աշխատանքի տեղավորման – 150
4. առողջապահության – 120
5. գյուղատնտեսական – 7
6. տրանսպորտի և կապի – 14
7. այլ հարցեր – 974

Նույնաբովանդակ կրկնվող դիմումներ՝ 82:

Հաստատված ժամանակացույցի համաձայն մարզի տարածաշրջաններում մարզպետի կողմից կազմակերպված ընդունելությանը մասնակցել են 550 քաղաքացի:

Վարչատնտեսական բաժին

1. Կատարվել են մարզի խորհրդի նիստերի, օպերատիվ խորհրդակցությունների արձանագրման աշխատանքներ:
2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 17 հունվարի 2018թ. N3-Ա հրամանով, սահմանվելով ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կարիքների համար բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող գնումների անվանացանկով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվող գնման գործընթացների գնումների համակարգող, իրականացվել են համապատասխան գործառույթներ.
ա) Կազմակերպվել և համակարգվել են գնումների գործընթացները. կազմվել և հաստատվել են գնման հայտերը, որոնք ներառում են գնման առարկայի բնութագրերը, կազմվել են գնման ընթացակարգի հրավերներ, գնման ընթացակարգի արձանագրություններ, իրականացվել են գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները, կազմվել և պատվիրատուի ղեկավարի հաստատման են ներկայացվել պայմանագրեր:

բ) Մարզպետարանի աշխատակազմի գնումների պլանը, գնումների պլանի փոփոխությունները, գնահատող հանձնաժողովների նիստերի արձանագրությունները, հրավերները և գնման հայտարարությունները տեղադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության gnumner.am/moderator համակարգ:

գ) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառման նպատակով Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կարիքների համար ձեռքբերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրերը մուտք են արվել <CLIENT-TRESUARY> - <LSFinance> (ԳԳՕ) համակարգ, ինչպես նաև էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության մոդուլ (PPCM):

3. Մարզի գյուղական համայնքների, այդ համայնքների հիմնարկների և մարզպետարանի ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների, ՓԲԸ-ների և ՊՓԲԸ-ների կարիքների համար կատարվող գնման գործընթացների վերաբերյալ Կոտայքի մարզպետարան վերջիններիս կողմից ներկայացվող տեղեկատվությունը /գնումների պլաններ, պլանների փոփոխություններ, գնման հրավերներ, գնահատող հանձնաժողովների նիստերի արձանագրություններ, շահերի բախման բացակայության, պայմանագիր կնքելու որոշման, կնքված պայմանագրերի մասին հայտարարություններ և այլն/ տեղադրվում են gnumner.am/moderator համակարգում:

4. Մարզի համայնքների կողմից ներկայացված հայտերի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել և համայնքներին են բաշխվել հողի հարկի և գույքահարկի անդորրագրեր:

5. Ընդհանրացվել է աշխատակազմի համար անհրաժեշտ գույքի ձեռքբերման պահանջը. մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներին բաշխվել են տարբեր տեսակի գրենական պիտույքներ, գրասենյակային առարկաներ, «Հայփոստ» ՓԲԸ Հրազդանի մասնաճյուղից փոստային նամականիշեր և ծրարներ, տնտեսական հիգիենիկ պարագաներ, բենզին, ավտոպահեստամասեր և այլն:

6. Մասնակցել է մարզպետարանի աշխատակազմի ակտիվների գույքագրման և մարզպետարանի ենթակայության հիմնարկների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման աշխատանքներին:

7. Ապահովում է Աշխատակազմի վարչական համալիրի շահագործումը, Աշխատակազմի էլեկտրաէներգիայի խնայողական սպառման, հեռախոսակապի բնականոն աշխատանքները, գույքի պահպանումն ու կառավարումը:

8. Ապահովում է Աշխատակազմի ավտոտրանսպորտի սպասարկումը /ԱՊՊԱ և տեխնոնման կտրոններ, ավտոմեքենաների վազքի և վառելիքի ծախսի հաշվառում, ուղեթերթիկների տպագրում և տրամադրում/:

9. Աջակցություն է ցույց տրվել ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիներին սահմանված նմուշի համապատասխան դիմումների լրացման, անհրաժեշտ փաստաթղթերը ճիշտ ներկայացնելու հարցերում: ՀՀ ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայությունից ստացված ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների դիմումների վերաբերյալ պատասխանների մասին իրազեկել է դիմումատուներին: